

Արկա՞ծ Թէ Դիտաւորեալ Աքթ

22 Հոկտեմբեր 2005
Հայոց Վանք, Երուսաղէմ

Առաւօտեան ժամը 2ին Վանքի Մայր դարպասի հանդիպակած ժա-
նանգաւորաց վարժարանի առաջ կանգ կարճէն երկու կրակմարի
ինքնաշարժներ որոնց շուտով կը հետեւին ոստիկանութիւնը:

Կ'ըսուի թէ ժառանգաւորաց տեսուչի Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի
ննչասենեակը կրակ է ինկած ու ինք հազիւ սենեակէն դուրս է ճիստպարտ
ստոյգ վտանգ շրջանցնելով: Մինչեւ առաւօտեան ժամերը ոստիկանութիւնը
ելեւմուտ կատարած է վարժարան:

Շշուկներ կը դառնան թէ պատահարը արկած չէր այլ դիտաւորեալ աքթ:

Ցաւալի Իրադարձութիւն Ժառանգաւորաց Վարժարանի Մէջ

27 Հոկտեմբեր 2005
Երուսաղէմ

Հազիւ թէ շաբաթ մը անց ժառանգաւորաց վարժարանի տեսուչ հոգշն.
Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի սենեակը կրակ ինկած ըլլալու խորհրդաւոր
պատահարէն, այս երեկոյ ժամը Ցին Իսրայէլեան ոստիկանութիւնը անգամ մը
ես ներխուժեց ժառանգաւորաց վարժարան, այս անգամ հոն պայթած կոխի
մը միջամտութեան:

Շուտով կը պարզուէր թէ ժառանգաւոր տղաք դառանակալ
պատուհասած են վարժարանի տեսուչ Հայր Պարետը, որուն առաջին կարգին
բարեբախտաբար օգնութեան հասած էր նոյն վարժարանի դռնապան
պաշտօնեան՝ քիչ մը աւելի ուշ շատ ուրիշներ:

Կոխի ծեծվրտութիւն գլխից վիրաւորուած գտանք Հայր Պարետը թէ
դռնապան պաշտօնեան: Նոյն եւ լուրջ վերքեր ստացած էին երկու
ժառանգաւոր տղաք:

Վնասուածները շտապ բուժօգնութեան ինքնաշարժով փոխադրուեցան
Հատասա հիւանդանոց եւ անմիջական օգնութեան բաժանմունքի մէջ
անցկացուցին ամբողջ գիշերը:

Ժառանգաւորաց վարժարանի ներկայ փոթորկոտ վիճակը դառնած է Ս.
Աթոռին լուրջ մտահոգութիւն, մանաւանդ որ յառաջիկայ Նոյեմբեր ամսու 19ին
թէ 20ին հո՛ն այդ վարժարանի սրահներու մէջ ու նոյն ժառանգաւոր սաներու
գործոն մասնակցութեամբ կայանալու են Հայ Գիրերու Գիւտի 1600 ամեակի թէ
Արթ. Պատրիարք Հօր գահակալութեան 15ամեակի զոյգ միջոցառումները:

Կողմերու որոշ հանդարտեցումէ ետք ոստիկանութիւնը քաշուեցաւ վայրէն
առանց խորը հարցաքննութեան թէ ձեռփակալութեան, երեւայ թէ հարցը
աւելիով չբարդացնելու մտավախութեամբ:

Այսուհանդերձ, լարուածութիւնը ժառանգաւորաց տղոց թէ՛ իրենց վերակացուներու միջեւ աւելի քան ակնհայտ է ու կը կարօտի հապճեպ լուծումի ու յարդումի: